ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » _____ 2021թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի հունիսի 16-ի N16-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N10-Ա որոշման.

1) N2 հավելվածի «I Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Բնապահպանության վարչություն» գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

h/h	Հաստիքների անվանումը	Հաստիքների քանակը	Հաստիքի ամսական պաշտոնային դրույքաչափը	Ընդամենը ամսական աշխատավարձը
1	2	3	4	5
Բնապահպանության վարչություն				
1	վարչության պետ	1	697,000	697,000
2	վարչության պետի տեղակալ	1	561,000	561,000
3	գլխավոր մասնագետ	4	323,000	1,292,000
4	առաջատար մասնագետ	3	289,000	867,000
5	գործավար	1	248,200	248,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	**10**		**3,665,000**

2) «I. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «ԱՄԲՈՂՋԸ՝ Երևանի քաղաքապետարան»» տողում «674.5» և «223,778,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «677.5» և «224,679,600» թվերով:

3) «Ամբողջը» տողում «1995.5» և «606,652,600» թվերը փոխարինել համապատասխանաբար «2001.5» և «607,553,600» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության (այսուհետ՝ Վարչություն) ընթացիկ գործառույթներն ու պարտականությունները սահմանված են Երևանի քաղաքապետի 2015 թվականի հունիսի 4-ի N1704-Ա որոշմամբ: Վարչության փաստացի գործունեությունն ի սկզբանե միտված է եղել Երևան քաղաքում միայն կանաչապատման աշխատանքների կազմակերպմանը: Ներկայումս վարչությունն ունի 7 աշխատակից՝ 1 վարչության պետ, 1 վարչության պետի տեղակալ, 1 գլխավոր մասնագետ-էկոլոգ, 1 գլխավոր մասնագետ-կենդանաբան, 1 գլխավոր մասնագետ-դենդրոլոգ, 1 առաջատար մասնագետ և 1 գործավար:

2021 թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում «Երևան, Վարշավա, Տիրանա մայրաքաղաքների համագործակցությունը վտանգավոր թափոնների կառավարման ընդհանուր մարտահրավերների շուրջ» ծրագրի միջազգային փորձագետներն իրականացրել են Վարչության փաստացի գործունեության վերլուծություն և համադրում միջազգային փորձի և առկա պահանջների հետ: Վերլուծությունը ցույց է տվել, որ Վարչության գործառութային բաշխումը և մարդկային ռեսուրսները չեն համապատասխանում 1 միլիոնից ավելի բնակչություն ունեցող քաղաքների արդի բնապահպանական հիմնախնդիրների կարգավորման պահանջներին: Վարչության գործառութային ուսումնասիրությունը փաստել է, որ.

1. Վարչության կանոնադրությամբ վարչությանը վերապահված գործառույթներն ամբողջապես չեն արտացոլում ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետին վերապահված լիազորությունները, դրանցից բխող՝ Վարչության փաստացի իրականացրած գործառույթները,
2. աշխատակիցների միջև գործառութային բաշխումը թերի է և վերանայման կարիք ունի,

3. Վարչությունը չունի իրեն վերապահված վերահսկողական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ (դաշտային աշխատանք կատարող աշխատակիցներ),
4. Վարչությունը կարիք ունի հզորացման և աշխատակազմի կարողությունների զարգացման, որպեսզի ապահովվի վերջին տարիներին իրականացված ինստիտուցիոնալ ու ծրագրային զարգացման բարեփոխումներով առաջադրվող գործառութային պահանջներին:

Այսպես, Վարչությունում շրջակա միջավայրի կառավարման հետ կապված օդի որակի, ջրային ռեսուրսների և վատթարացած հողերի մոնիթորինգի ու հսկողության, թափոնների կառավարման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և կենդանիների պաշտպանության/կառավարման գործառույթների իրականացման համար ստեղծված չեն բավարար կարողություններ և ներկայումս դրանց պատշաճ իրականացումը պահանջում է լրացուցիչ կադրերի ներգրավում: Մինչ այժմ, Վարչությունը ներգրավված չի եղել շրջակա միջավայրի կառավարման հիմնական ռազմավարությունների և ծրագրերի (օրինակ՝ Երևանի «Կանաչ քաղաք գործողությունների ծրագիրը» կամ «Կայուն էներգետիկ զարգացման ծրագիրը») մշակմանը, իրականացման կազմակերպմանը և մշտադիտարկմանը: Բացի այդ, Վարչությունը թույլ և թերի ռեսուրսներ ունի վարչական շրջաններում տնտեսվարողների հետ իրենց ամրացված կանաչապատ տարածքների բարեկարգման ուղղությամբ աշխատանքների կազմակերպման ու հսկողության իրականացման համար, ինչպես նաև Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոններով Վարչությանը վերապահված լիազորությունների իրականացման և նշյալ կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության համար: Կարևորվում է Վարչության կարողությունների հզորացումը կլիմայի փոփոխության մեղմացմանն ու հարմարվողականությանն ուղղված ծրագրերի մշակման ու իրականացման համար:

Վարչությունը «Կանաչապատում և շրջակա միջավայրի պաշտպանություն» ՀՈԱԿ-ի ստեղծումից ի վեր փաստացի իրականացնում է նաև նշյալ ՀՈԱԿ-ի, իսկ 2021 թվականից նաև «Թափառող կենդանիները վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեության կազմակերպման և վերահսկման գործառույթներ: Նախատեսվում է առաջիկայում վարչությանը վերապահել նաև «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի գործունեության կազմակերպման և վերահսկման գործառույթները:

Հատկանշական է, որ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում Վարչական շրջանների ղեկավարներին լիազորություններ պատվիրակված չեն, ուստի՝ բնագավառում Երևանի քաղաքապետին վերապահված բոլոր լիազորությունների իրականացումն ապահովում է Վարչությունը:

Մասնավորապես, Վարչության գործառույթների շրջանակն ընդգրկում է ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին (Երևանի քաղաքապետին) ուղղակիորեն կամ անուղղակի վերապահված հետևյալ հիմնական գործառույթների իրականացումը՝

- մասնակցություն շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող պետական ծրագրերի մշակմանը և Երևան քաղաքի վարչական տարածքում դրանց իրականացման ապահովում.
- ոլորտի պետական քաղաքականության իրականացմանն ուղղված ծրագրերի, հայեցակարգերի, միջոցառումների մշակման և դրանց իրականացման ապահովում.
- շրջակա միջավայրի պահպանության համայնքային ծրագրերի իրականացում.
- Երևանի սեփականություն համարվող հողերի պահպանություն հողատարումից, ողողումներից, ճահճացումից, քիմիական, ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից.
- Երևանի սեփականություն համարվող հողերում բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի աշխատանքների իրականացման ապահովում.
- կլիմայի փոփոխության հիմնախնդիրներին ուղղված հարմարվողականության և մեղմման միջոցառումների մշակում, այդ ծրագրերի իրականացման կազմակերպում և համակարգում.
- քաղաքապետարանի ենթակայության ոլորտային համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատանքի կանոնակարգում և վերահսկում.
- Երևանի կանաչապատման աշխատանքների համակարգում և վերահսկում.
- Երևանի սեփականություն համարվող ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների պահպանման և օգտագործման կանոնների կատարման վերահսկում և ապահովում,

- վարձակալված կանաչ տարածքներում վարձակալների կողմից ստանձնած պարտավորությունների կատարման հսկողություն,
- Երևանի քաղաքապետարանի տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման հողային տարածքներում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ հսկողություն և խախտման դեպքեր հայտնաբերելիս՝ արձանագրության կազմում.
- Երևան քաղաքում տնային կենդանիների պահման թույլտվության և հաշվառման պահանջների պահպանման վերահսկում և խախտման դեպքեր հայտնաբերելիս՝ արձանագրության կազմում.
- Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասազերծման և դրանց թվաքանակի կառավարման միջոցառումների իրականացման վերահսկում և համակարգում.
- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված գործառույթների իրականացման ապահովում.
- տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվող կանաչապատման և բարեկարգման նախագծերի քննարկում և համաձայնեցնում.
- շրջակա միջավայրի բաղադրիչների՝ մթնոլորտային օդի, ստորերկրյա և մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտվածության, բարելավման կարիք ունեցող հողերի որակի մշտադիտարկման արդյունքների վերլուծում և ցուցանիշների բարելավման վերաբերյալ առաջարկների մշակում.
- տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվող կանաչապատման և բարեկարգման նախագծերի քննարկում և հաստատում.
- բնապահպանության ոլորտին վերաբերվող նախագծերի, ծրագրերի և այլ փաստաթղթերի համաձայնեցում.
- բնապահպանական ծրագրերի իրականացման խնդիրներով համագործակցություն միջազգային և հասարակական բնապահպանական կազմակերպությունների հետ, IKLEA կազմակերպությանը և ԵՄ քաղաքապետերի դաշնագրին Երևանի քաղաքապետարանի անդամակցությունից բխող հարցերի համակարգում.
- վարչական շրջանի տնտեսվարող սուբյեկտների հետ աշխատանք՝ շրջակա տարածքների կանաչապատման և բարեկարգման հարցերով:

Վարչությունը տարեկան մշակում է շուրջ 6000 գործ (յուրաքանչյուր մասնագետ՝ շաբաթական միջինում մոտ 25-30 գործ), կազմակերպում և/կամ մասնակցում է մոտ 150 հանրային լսման, իրականացնում է մոտ 950 ծառահատման տոմսի տվյալների ստուգում և բազայի վարում (2021 թվականի կանխատեսվող տվյալներ), քննարկում/հաստատում է կանաչապատման և բարեկարգման նախագծեր, որը ենթադրում է ծավալուն մասնագիտական աշխատանքներ:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ա/ լրամշակվել է Վարչության կանոնադրությունը, բ/ Վարչության առկա և ակնկալվող գործառույթների վերլուծության, ինչպես նաև մասնագետների ծանրաբեռնվածության գնահատման արդյունքում, բնապահպանության ոլորտում Երևանի քաղաքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման նպատակով, մշակվել է Վարչության հաստիքակազմի վերանայմանն ուղղված սույն նախագիծը, գ/ ինչպես նաև վերանայվել է Վարչության աշխատակազմի գործառութային բաշխումը՝ աշխատանքի առավել օպտիմալ բաշխան և մասնագետների գործառույթների հստակեցման նպատակով: Նախատեսվում է նաև աշխատակազմի կարողությունների զարգացման վերապատրաստումների ծրագրի մշակում:

Նախագծով, մասնավորապես, առաջարկվում է ավելացնել 1 գլխավոր մասնագետի և 2 առաջատար մասնագետի հաստիք, ինչպես նաև Վարչության առկա մասնագետներին վերապահել ՀՀ օրենսդրությունից բխող՝ նոր պարտականություններ և գործառույթներ, ըստ հետևյալի՝

1 գլխավոր մասնագետ՝ (բարձրագույն կրթության պահանջը՝ շրջակա միջավայրի գիտություններ, աշխարհագրություն) իրականացնում է հողային ռեսուրսների պահպանման և բարելավման ուղղությամբ բնապահպանական միջոցառումների կազմակերպում և տարեկան հաշվետվության ներկայացում, ոռոգման ներհամայնքային ցանցի և թափոնների կառավարման հետ կապված խնդիրների վերլուծություն, մշտադիտարկում, ծրագրերի մշակում, բնապահպանական խնդիրների վերաբերյալ վերլուծությունների կատարում: Իրականացնում է բյուջետային հայտերի կազմում, հնգամյա և տարեկան զարգացման ծրագրերի մշակում, շահագրգիռ կողմերի հետ քննարկումների կազմակերպում, գնումների պլանի և ժամանակացույցի կազմում և փաստաթղթաշրջանառության կազմակերպում, աշխատակազմի այլ

ստորաբաժանումների հետ աշխատանքների կազմակերպում, գործող ծրագրերի իրականացում և արդյունքների մշտադիտարկում:

1 գլխավոր մասնագետ՝ (բարձրագույն կրթության պահանջը՝ շրջակա միջավայրի գիտություններ, բնապահպանություն և բնօգտագործում, կենսաբանություն, կենսաքիմիա) կատարում է բնապահպանական խնդիրների վերաբերյալ վերլուծություններ, կազմակերպում է միջազգային կազմակերպությունների կողմից և մասնակցությամբ իրականացվող համայնքային բնապահպանական ծրագրերը, բնապահպանության ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքները: Ուսումնասիրում և մշակում է կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողականության և մեղմման միջոցառումներ, մթնոլորտային օդի որակի, այդ թվում նաև ջերմոցային գազերի արտանետումների, ջրի որակի մշտադիտարկման, հավաքագրված արդյունքների վերլուծություն և հաշվետվության ներկայացում, մթնոլորտային օդի, հողի և ջրի աղտոտվածության նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկների ներկայացում: Կազմակերպում է աշխատակազմի այլ ստորաբաժանումների հետ աշխատանքները, գործող ծրագրերի իրականացումը և արդյունքների մշտադիտարկումը:

1 գլխավոր մասնագետ՝ (բարձրագույն կրթության պահանջը՝ շրջակա միջավայրի գիտություններ, կենսաբանություն)՝ կանաչապատման և քաղաքային պլանավորման գծով մասնագետ: Իրականացնում է կանաչապատման ոլորտում հայեցակարգերի, քաղաքականությունների և ընթացակարգերի, ծրագրերի մշակումը, առաջարկների ներկայացումը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գործունեության վերահսկողության ապահովմանն ուղղված աշխատանքներ՝ հիմնվելով վարչություն/քաղաքապետարան ստացված հարցումների և բողոք-դիմումների վրա: Հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավական նորմերը վարչության պետի հաստատմանն է ներկայացնում վարչությանը ներկայացված ծառերի հատման թույլտվությունները և կանաչապատման ծրագրերը, վերլուծում և առաջարկություններ է ներկայացնում տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացվող կանաչապատման և բարեկարգման նախագծերի վերաբերյալ: Կազմակերպում է վայրի և դեկորատիվ բույսերի պահպանման ապահովման, ինչպես նաև ինվազիվ բույսերի տարածման կանխարգելման աշխատանքները, իրականացնում է տվյալների բազայի վարմանն ուղղված աշխատանքներ: Երևան քաղաքում կանաչ տարածքների բարելավման

ուղղությամբ քննարկումներ է իրականացնում մասնավոր ընկերությունների և անձանց հետ, մասնակցում է բնապահպանական նախագծերի իրականացման ապահովմանը:

1 գլխավոր մասնագետ՝ (բարձրագույն կրթության պահանջը՝ կենսաբանություն, անասնաբուժություն)՝ կազմակերպում է Երևան համայնքի սահմաններում գտնվող վայրի, գյուղատնտեսական, թափառող և տնային կենդանիների պահպանման, հաշվառման և վերահսկման աշխատանքները: Կազմում է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակների և տնտեսվարողների վերաբերյալ տարեկան հաշվետվություն՝ միաժամանակ համագործակցելով և աջակցելով տվյալ ոլորտի լիազոր մարմնի կողմից իրականացվող հակահամաճարակային միջոցառումներին: Իրականացնում է «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի և «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի մասնագիտական գործունեության վերահսկմանն ուղղված աշխատանքներ՝ հիմք ընդունելով վարչություն/քաղաքապետարան ստացված հարցումները և բողոքները: Ոլորտի կառավարումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշակում է անհրաժեշտ քաղաքականություն և կանոնակարգեր, աջակցում դրանց համագործակցող և լիազոր մարմիներին և կառույցներին, անդամակցում միջազգային կազմակերպություններին: Իրականացնում է Երևան քաղաքի տնային և թափառող կենդանիների հետ կապված ծրագրերի համակարգմանն ուղղված աշխատանքներ, կենդանաբանական ու անասնաբուժական խնդիրների մշտադիտարկում և օրենսդրական պահանջների նկատմամբ հսկողության իրականացում, տվյալների բազայի կառավարմանն ուղղված աշխատանքներ: Մշակում է կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի և իրազեկման կրթական ծրագրեր:

2 առաջատար մասնագետ՝ մասնակցում են բնապահպանական պետական տեսչության տարածքային ստորաբաժանման հետ համատեղ ստուգումների իրականացմանը, իրականացնում են բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ հսկողություն և խախտման դեպքեր հայտնաբերելիս՝ կազմում արձանագրություն: Իրականացնում են վարչական շրջաններում տնտեսվարող սուբյեկտներին ամրակցված տարածքների բարեկարգման ու կանաչապատման նպատակով կատարված վարչական իրավախախտումների նկատմամբ մշտադիտարկում և իրավախախտումների կանխարգելում: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կանաչապատման աշխատանքների մշտադիտարկում:

1 առաջատար մասնագետ՝ իրականացնում են ջրային ռեսուրսների, հողի և օդի որակի հետ կապված խնդիրների վերլուծություն, մշտադիտարկում: Մասնակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ու փորձաքննության հետ կապված հանրային քննարկումների կազմակերպմանը և հանրությանը պատշաճ իրազեկման ապահովմանը միտված աշխատանքներ: Իրականացնում է վարձակալված համայնքային կանաչ տարածքներում կանաչապատման կանոնների պահպանման մշտադիտարկում, վիճակի վերլուծություն և աշխատանքների մշտադիտարկման արդյունքների էլեկտրոնային գրանցամատյանի վարում: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կանաչապատման աշխատանքների սեզոնային (գարուն և աշուն) և տարեկան ծրագրերի կատարողականի վերլուծություն, էլեկտրոնային տվյալների բազայի վարում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով առաջարկվող փոփոխությունների արդյունքում աշխատավարձի գծով տարեկան ծախսերն ավելանում են 10,812,000 դրամով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ